

iOS համակարգի առաջին հայերեն ուղղագրիչը թողարկուած է...

Գալուստ Կիւլպենկեան Հիմնարկութեան Հայկական Բաժանմունքը ուրախութեամբ կը յայտարարէ, որ iOS համակարգի հայերեն ուղղագրիչը արդէն տրամադրելի է եւ անվճար ներբեռնելի App Store-էն: Քանի մը ամիսէն պատրաստ պիտի ըլլայ նաեւ Android համակարգի ուղղագրիչը:

Հայերէն լեզուն կենսունակ պահելու եւ թարմացնելու մեր յարատեւ ջանքերուն պարունակին մէջ, *Նայիրիստեղն*-ը — iOS-ի ստեղնաշար-ուղղագրիչը — անհրաժեշտ քայլ մըն է: Ան կ'ամրապնդէ հայերէնի տեղը թուային աշխարհին մէջ, ըլլալով ա՛յն գործիքը որ կը դիւրացնէ հայերէնի գործածութիւնը տարբեր հարթակներու վրայ, ընկերային եւ հաղորդակցութեան զանազան ցանցերու մէջ (Facebook, Instagram, Whatsapp եւ Messenger), ինչպէս նաեւ Pages, Notes եւ անլին:

Այս անկիւնադարձային եւ անհրաժեշտ գործիքը ստեղծուած է Nayiri.com-ի կողմէ եւ կառուցուած է HySpell-ի հիմքերուն վրայ: Այս առաջին թողարկումով, *Նայիրիստեղն*-ը կը բանի դասական ուղղագրութեամբ, հայերէնի երկու լեզուաճիւղերուն համար՝ արեւմտահայերէն եւ արեւելահայերէն: Ուղղագրիչը կը ներառէ անլին քան 150,000 բառոյթ, որուն շնորհիւ կը ճանչնայ հինգ միլիոն բառածէւ անլին: Առկայ ստեղնաշարը պատրաստուած է արեւմտահայերէնի համար: Յառաջիկայ թողարկումները պիտի ընդգրկեն տարբեր ստեղնաշարեր, ներառեալ հայաստանեան ուղղագրութեան համար:

Հայկական Բաժանմունքի տնօրէն Ռազմիկ Փանոսեանի խօսքերով՝ «Արհեստագիտութեան եւ լեզուի կապակցութիւնն է որ հայերէնը կենսունակ, գրաւիչ, եւ 21-րդ դարուն առնչելի պիտի պահէ: Վստահ ենք որ ուղղագրիչը պիտի մղէ որ շատ մարդիկ ամէնօրեայ դրութեամբ հայերէն գրեն: Շնորհակալ ենք Nayiri.com-ին այս բարձր գործը ստանձնելու եւ կատարելու համար»:

Այս յղումին հետեւելով կրնաք ներբեռնել ուղղագրիչը: Բարո՛վ գործածեք:

<https://apps.apple.com/us/app/nayiriboard/id1515398679>